

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

### ***Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության գյուղատնտեսության ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ (30-2.3-128)***

#### ***Գլխավոր մասնագետ՝***

- իր իրավասության շրջանակներում մասնակցում է հանրապետության ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունների, ագրոպարենային ոլորտի ընդհանուր իրավիճակի զարգացմանն ուղղված հայեցակարգերի, ծրագրերի, առաջարկությունների նախագծերի մշակմանը և մոնիթորինգի իրականացմանը, ագրոպարենային ոլորտում ձեռնարկատիրական գործունեությանը նպաստող ծրագրերի մշակման աշխատանքներին, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակման աշխատանքներին.
- մասնակցում է ծրագրերի կատարման վերաբերյալ հաշվետվությունների ամփոփման աշխատանքներին.
- Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, մարզային կառույցների և ինքնուրույն իրավաբանական տնտեսավարող սուբյեկտներից ստացվող տվյալների հիման վրա ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ կատարում է ուսումնասիրություններ ու վերլուծություններ և ներկայացնում առաջարկություններ.
- Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է Բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ.
- Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
- իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

#### ***Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝***

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա

աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

• «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն որոշման և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

### ***Աշխատավարձի չափը՝ 212,309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ***

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

***Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:***

### ***Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝***

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
  - աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
  - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
    - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

***Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 22.08.2018թ.***